

372(47.925)(09)
9

ՕՍՄԱՆԵԱՆ ԳՈՐԾՈՒՐԸ

ՔԻՐՏԻՍԹԱՆԻ

ԵՒ

ՄՈՒՀԱՄԻ

ՎԱՆՈՐԷԻՑ ԵՒ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ

ՎԷՄԱԿԸ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Թ. ՏԻՎԻԹՃԵԱՆ

1869

Օէյմինի գործը. — Աշխարհէն կացութեան վիճակը. — Թիւրքիոյ վարչութենէն և վարչականներու այժմեայ վիճակը. — Ի՞նչպէս է. հարցնողներու ապոյգ և ճշմարիտ պատասխան. —

Օէյմինի գործը։ Երբ Տէրութեան հրամանաւ Օէյմինի ոհրս իշխանները ի Պոլիս և ընտանիքները ի Արաշ բերուեցան, զէյթինցիք այնպէս կարծեցին որ՝ զիրենք ալ միանգամայն Օէյմուէն պիտի գաղթեցուէ Տէրութիւնը մէկ օտար երկրի մէջ. անոր համար ի հարկէ ստիպուեցան այս ցաւալի վտանգէն ազատուելու ճարը դտնալու հետևիլ։

Ուստի այս տարակուսելի իրենց կացութեան վիճակին մէջ կ'յորդորուին օտար տեղէ մի, ինչու՞ թէ կրոնափոխութեամբ պէտք կրնան ազատիլ, վասնորոյ կելլեն միաբանութեամբ կրօնքնին փոխելու։ Ահա՛ դիպուածն առաջին պատոյը, որ ստոյգ աղբիւրներէ իրենց կարծիք ըրածնուն վրայը ճշմարիտ ըլլալը չ'ըստուգելէն յառաջ կրօնքնին փոխելու կելլեն, և ըշտապ կուգան Թերթ, Հալէպ, և կառնուն անկէց Լատին եպիսկոպոսը և քանի մի վարդապետ և քահանայ կուգան Թէնէ, Ընդոպ, և անկէց Արաշ, և կ'լսէ Պոլսոյ ազգային Պարչութիւնը, և կ'հրամայէ հեռագրով գերապատիւ Տիգրանեան Արկրտիչ Պարդապետին իսկոյն Թերթոյ ելնել և երթալ Օէյմին այցելութեան. 1866 Նոյեմբեր 12. ուստի կելլէ, վեց մարդով կուգայ 60 վերստ Թէնէ քաղաքը. հոն ժողովուրդը կ'դիմաւորէ զինքը, ու կրսեն իրեն. Դէ՛ 5000 էն ասելի այր և կին հայոց ժողովուրդ մը. առանց հոգևոր խնամատարութեան ճալով. ահա՛ 8 տարի է որ՝ առանց եկեղեցոյ և վարժարանի կեցեր ճոցերեն. 1858ին սկսած շինել Բայոյ Յոխորդարանի պարհեցաս. այսինքն սով և սղութեան եղաս աղքատացած. ասոնք շինելը ճաց կիսաց. 50000 ղրուշի կարօտ է. օտար աղքի տարողները Դեղ Խոսրացան շինելու՝ Յրէ, Ընոր իրենց կրօնքը ընդունելու ելլամ. Դէ՛ հայ են՝, ու հայերէն չեն՝ գիրը. Դեր կրօնքը պինդ կ'պահեն՝. ուրեմն Դեր եկեղեցին ու վարժարանը պէտք շինես, ինչ ոչ. Դեր հաստատ պատասխան մը տուր։

Պատասխանեց. Հիմայ ես Օէյմին կերթամ, Աստուծով վերադառնալուս ճար մը կ'գտնամք. շէնքերը լմնցընելու. ըսաւ ելաւ 60 վերստ եկաւ Ընդոպ քաղաքը, և անկէց ալ ելաւ 90 վերստ եկաւ Արաշ քաղաքը. հոն տեսաւ զէյթինցիները, և իշխանաց ընտանիքները, և իմացաւ կրօնափոխութեան դիմելնուն լուն պատճառը։ Ուստի ինչ

որ խոստացած էին Լատին եպիսկոպոսները զԷյմինցոց բարիք ընելու յետ կրօնափոխութեան, զնոյն խոստացաւ յիշեալ գերապատիւ վարդապետը կատարել եթէ կրօնափոխ չլինին։ Որովհետև լաւ տեղեկացաւ զԷյմինցոց կրօնափոխութիւնը ոչ թէ հոգևորապէս է, այլ և քաղաքականապէս. վասնորոյ ինքը յանձնառու եղաւ կատարել հետևեալ խոստմունքը, որք լատինք խոստացած էին։ Առաջին. ընդ-էշխաններին Պոլսոյ ողողել. երկրորդ՝ անոնց ընտանիքները Մարշէն Օէյ-ինն դրջնել. երրորդ՝ Մարշի բանտարկեալները ազատել. չորրորդ՝ յուր ժարանները հաստատել. հինգերորդ՝ ընկերանոցներ շինել և նորոգել. վեցերրորդ՝ սելի ծանրոնին Աբոնի տուրքին ընդունուելը. եօթներրորդ՝ անդրանիկ ոչ ընալ ի՛նչ հարստահարելու։

Յիշեալ գերապատիւ հայրը, իսկոյն գիմեց Մարաշու Կառավարութեան հետ տեսնուելով, երբոր խոստումը կատարեց. արձակել տալով Մարաշու բանտարկեալները. եկաւ Մարաշու եկաւ 60 վերսթ Օէյթին, 1866 Դեկտեմբեր 10. քարոզեց և յորդորեց և խաղաղացուց ժողովուրդը, և համոզեց որ գիտութեան հետևին. ուստի հաստատեց չորս վարժարան և մէկ ուսումնարան, որ վաղուց հետէ խանգարուած էր, և վարժապետներու և վարժարանաց բոլոր ծախքը յանձնառու եղաւ վճարելու. Զագրբեան Յարութիւն պատուելին հայկաբան և տաճկերէնի դասատու կարգեց, և այլ չորս վարժապետ. Նազարէթ, Մնացական, Յակոբ, և Փանոս հաստատեց դասատուք և ահա կիսով չափ ընդարձակ խոստումնալ կատարեց, և հաստատեց ընդհանուր, և կրօնական և քաղաքական ժողովներ, և հոգաբարձուներ։

Նաև հաստատեց արձանագրութիւն մը Վանից մէջ որ բոլոր տարեկան ելքը և մուտքը, և օրական պատահած գործերը անգամ արձանագրուին Սահակ վարդապետի ձեռամբ, և որոշեց 24 տղայ 12 տարեկան հասակի, որ պիտոր յղեր Սուրբ Արտաշէսի. Իշխիրս և Պոլսոյ ուսումնարանները կրթուելու համար, իսկ վերջը անոնց ուրթը հատը մինակ առաւ հետը, և եկաւ Մարշ 1867 Մարտի, և զԷյմինցի Արժանապատիւ Պարոնն վարդապետը որ զրկած էր Օէյթունի գաւառները հայերու վիճակը քննելու. ահա անոր ըրած քննութեան տեղեկագիրը տես Արշալոյս Արարատեան 808 թիւն. հոն պիտի ողբաս ու արտասուես հայոց թշուառ կացութեան վերան, որ մինչև ցայսօր կ'ըսպասեն եղեր հայ արիւն ունեցող այցելուի մի։ Հոս տեղ Մարաշու իշխան մեծ ապատիւ Հաճի Տէվլէթ Աղան հաստատեց, Օէյթինի և այլ գաւառաց խնամատար և վերակացու, և ապա եկաւ Ադանա և անկէց

Ռէնէ. դարձեալ քիլիսեցի հայերը աղաղակ բարձին եկեղեցւոյ և վարժարանի շինութեան համար, ևս յորդորեց որ քիչ մի համբերին. ելաւ անկէց եկաւ Ռերիա. ուր տղայքը հետը, և անկէց Ընդէոտ և Խակէնտէրուն նաւահանգիստը 450 վերսթ. և նստաւ շոգենաւը շատ նեղութիւն կրելով եկաւ Աղեքսանդրիա և անկէց Յէգիպտոս. տեսաւ մեծապատիւ Պօղոս Եֆէնտի Կարապետեանը. բարեհաճեցոյց առժամանակեայ կերպիւ տարուէ տարի 100 օսմանեան լիրայ ոսկի. Օէյթունի վարժարաններու ծախուցը վճարել. ուստի ի պատիւ ծանր աշխատութեան յիշեալ գերապատիւ վարդապետին. հաճեցաւ և ընդունեց վճարել. տես Մասիս 802 թիւն. Ժամանակ Հանդէս 107. Մանղումէ 390 թիւն.

Վերադարձաւ Աղէքսանդրիոյ. տեսաւ մեծապատիւ Մեծագործ Աղայ Յակոբեանը, և նորին միջոցաւ հաւաքեց 2400 դահեկան Ռէնէ-կիսաշէն եկեղեցւոյ շինութեան համար. դարձեալ նստաւ շոգենաւը ութը տղաները հետը եկաւ Իզմիր. տեսնուեցաւ Սպառթալեան մեծապատիւ Հաճի Նուրոյ և Յովհաննէս Աղաներուն հետ, և եկաւ Պոլիս Յունիս 12, մեծապատիւ Մէոմիլէ Աղայի տունն տարաւ ութը տղաքները. յետոյ. վրանին գլուխնին մաքրեց, և հետևեալ օրը, ներկայացաւ Արքազան Տեառն Պօղոս Պատրիարքին ի տան Երամեան մեծապատիւ Կրոպէտ Պէյին, ուր ներկայ էին գերապատիւ Անէրոէ եպիսկոպոս. Պորբէթին վարդապետ. մեծապատիւ Աշնանեան Պօղոս, և Մաղսուտեան Յրոնիմ Եֆէնտիքը. հետ հարցուպատասխանի Ութ-նիոյ վրայօք. ութը տղայքը ողբաձայն հետևեալ երգը խօսեցան հոն տեղ.

Անանկեան դէռը դէմօտ եղ մոլնէ, ահա դէր էմ եղ մոլնէ.
Քաղցր ակամբ հայել մանկանա ապառէ, ահա դէր էմ ապառէ.
Մէ յամենոյտ մեղ խնամել բարերարտ, ահա դուռ էտ խնամատարտ.
Ի սէր Հայկոյ և Երամոյ աղաղէմտ, ահա դէր էմ աղաղէմտ.
Մեծն Սահակ, Անէրոէ Մեսրոպէ հայրապետտ, ապոյգ դէր էմ հայրապետտ.
Ամեն նոցին դուռտ մեղ այսօր հովանաւորտ, էրա դէր էմ հովանաւորտ.
Հայր Մկրտիչ դէր վարդապետ Տիգրանեան, ահա դէր էմ Տիգրանեան.
Մէրվ յոնոյ եբեր ղմեղ յայս ապեան, ահա դէր էմ յայս ապեան։

Յետ այնորիկ վերադարձաւ միւս օրն Յունիս 14 եկաւ ներկայացաւ Փոխարքայ Սուրբ Հոգոյ Աղի Փաշային, ուր շատ հարց ու պատասխանէն ետքը, Ութնիոյ վրայօք ներկայացոյց ութը տղաքները, որոց աշտեղագոյնը Փիլիպոս անուն 9 ամեայ տղայն, բազկատարած խօ-

սեցաւ հետևեալը. Յարդարմունք սուրբ տաճարի Եփեսոսի. ղեկի ղերի պատեալ էին բահ էյլե Սուլտանը։ Ամէնամբեղ Ռաշ սիրը տբր, Օրէյին տբր, Ինտաս սէնդէն պէղ սամրբեղ, բահ էյլե Սուլտանը։ Պա՝ տէնեպէ կէն կէօրմեպէ Եփեսոսի. էլմի Ռահմէլ մէրտբանա երմեպէ Սուլտանը։ Ամէ+ամեղմէղ եափելաճաք ինտաս եօք, ինտաս սէնդէն պէղ տէլէրէղ Սուլտանը։ Յարդարմանա նէ մէ+մէպ վար, նէ հօճա. Եփեսոսի գօշնամաղտա նէ սէմաղեր վար նէ սքճէ։ Ամէնի տէյլ կէլմէ Եփեսոսի. ըսաւ ետ քաշուեցաւ. ուստի գերապատիւ Հայրը սկսաւ չորս Լիշխանաց, և անոնց ընտանեաց ի Օրէյմին վերադառնալու խնդիրը ընել, ուր և հաճեցաւ ընդունել և ընդունեց, որ այս խնդիրը յառաջմանէ ազգի կողմանէ, ևս եղնուած էր. վասնորոյ զկնի քանի օրէն ամենապատիւ Արքեպիսկոպոսն Պատրիարքը, գերապատիւ Տիգրանեան Տիրոջ վարդապետը, մեծապատիւ Տագուտեան Սիմոն Եպիսկոպոսին երթալով հրամանը առին Օրէյմին երթալու. տեսս Տասիս 801 թիւն ահա հոս կատարեցաւ. ուրջին և երկրորդ խոստմունքն ալ. վերադարձաւ եկաւ մեծապատիւ Զրաճեան Սարգիս Աղային տունը հոն կեցաւ, և ապա տղայոց երկուքը Նուպարեան ուսումնարանն. վեցը Սուրբ Փրկչի ճեմարանն դրաւ, և եկաւ Պօլսոյ 1867 Օգոստոս 28. եկաւ Իզմիր, ուր 100 լիրայ և 600 կտոր մեծ և փոքր գրեանք հաւաքեց, Օրէյմինի համար. համաձայն Պատրիարքարանի հրամանին և Արքունեան գիտութեամբը վճարեց պարտքերը, որ Օրէյմինի համար եղած էր, և մեկնեցաւ Իզմիրէն Հոկտեմբեր 6 և եկաւ Յեգիպտոս շնորհակալութիւնը մատոյց մեծապատիւ Պօղոս Եփեսոսին ի մասին 100 լիրայ վճարմանն, եկաւ Աղեքսանդրիոյ տեսնուեցաւ մեծապատիւ Խորոր Յակոբեան Աղային հետ, և հաճեցոյց նորա սիրտը. Օրէյմինի Սուրբ Աստուածածնի վարժարանի առեկան ծախքը ինքը հոգալու համար. յիշեալ Աղգասէր Աղան իւր հարազատ երկու եղբարքն հաճեցան և ընդունեցին. Սուրբ Աստուածածնի վարժարանին ուսումնարանի տարեկան ծախքը յորդոց յորդիս վճարել ի պատիւ աշխատասիրութեան վարդապետին և ի սէր հայ ազգութեան. տեսս Մանրամեայ օրական թերթի 86, և Աբեղայ 819 թիւն. եկաւ գոհութեամբ սրտի անկէց ի Սուրբ Երուսաղէմ, և շատ պատուեցաւ սրբազան միաբանութենէն. տեսս Մէծ թիւ 11. և անկէց վերադարձաւ եկաւ Իերիայ Հոկտեմբեր 23 բարեկարգեց գործերը. եկաւ Ադանա և Մարաշ և Օրէյրին, 1868 Յունուար 20։ Տուաւ 2000 կտոր մեծ և փոքր գրեանք վարժարաններուն. հաստատեց Յակոբեան եղբարց յանուն վարժարանը և

ուսումնարանը. ի Սուրբ Աստուածածնի յԵկեղեցւոջ. դրաւ տէր Մինասեան Կոչոպէոն վարժապետը հայկաբանի, և տաճկերէնի դասատու, և տէր Կոչոպէոնեան Կոչոպէոնը. և տէր Յովհէթը վարժապետ, և օգնական. վերադարձաւ եկաւ Մոսչ Հաճի Տէվլէթ Աղայի ձեռամբ տուաւ վարժապետաց ամսականներն. և այլն։

Եւ դադարեցուցելու աշխատեցաւ բողոքականներու մեծ խռովութիւնը որ զէյթինցոց հետ, և ելաւ անկէց եկաւ Ադոպ, և Ռէպ Ապրիլ 20։ Սկսնալ զէյթինէն բոլոր վարժարաններու քննութիւնը ընելով ցուցակներն առաւ. քիլիսեցոց համար. յորդորեց որ համբերեն մինչև Սուրբ Յջմիածնէն վերադառնայ Մարաշու, Ադապու Ռիլիսու աղերսական հանրագիրներ ուղղեցին գերապատիւ վարդապետին, որ ի մասին վարժարանաց շինութեան յղէ ի Պոլիս, եկաւ Ռէպէոյ, գործերը կարգի դրաւ եկաւ 135 վերսթ Պէրէճիկ, ուր մահմետականք վարժարաններու պատուհանները գոցել տալով, եկեղեցւոյ շինութիւն ալ արգելած էին բարբարոսութեամբ. հոս տեղ նստաւ 8 օր և կարգի դրաւ գործերը և բացաւ պատուհաններն, և գրեց Ռերիոյ կուսակալին և տուաւ շինել եկեղեցին աշխատութեամբ Խարաճեան Պէոբոս Աղայի, ելաւ ասկէց եկաւ 85 վերսթ Ադեսիա. Ո-ուֆ քաղաքը. հոս 15 օր վար դրին ժողովուրդը և շատ պատուեցին, և վարժարաններու քննութիւնը ըրաւ, և քաջալերեց Լուսաւորչեան ընկերութիւնը, և իրենց համար գրեց Պոլիս, և յանձնեց անոնց խնամք տանելը մեծապատիւ Սէմոն Եպիսկոպոսի Մաքսուտեան, և գործակատար հաստատեց մեծապատիւ Յովհան Եպիսկոպոսին տէր Գրիգորեան. յորդորեց իշխաններն և յոյս տուաւ իրենց խնդիրները կատարուելուն. ելաւ անկէց եկաւ 190 վերսթ Տիգրանակերտ. Յունիս 26. տեսնուեցաւ իւր ազգականաց և բարեկամաց հետ. մեծ ընթրիս մը ըրաւ իրեն մեծապատիւ Մահտեսի Մոսէոս Աղայն Զիլինկիրեան, և բոլոր քաղաքի քրիստոնեայ ազգաց երևելիները եկան տեսութեան. գերապատիւ Առաջնորդներն և Ռիւրտիսթանէն հրաւէրներ եկան շատ ստիպեցին զինքը Ռիւրտիսթան տանելու և չգնաց. ելաւ անկէց եկաւ 300 վերսթ Կարնոյ քաղաքը, ուր ընկալան մեծաւ պատուով և հրաւիրեց զինքը մեծապատիւ Մութաֆեան Յոսոֆն, և Յակոբճանեան Մահտեսի Սոսէն Աղաները ի պատիւ, և այլ միւս քաղաքի երևելիքը բոլորնալ տեսութեան եկան, և ստիպեցին քանի շաբաթ մնալ. բայց ինքը՝ ելաւ վարժարանները շրջեցաւ, և գոհ եղաւ պատուելի

մեծապատիւ Կոստանդին վարժապետէն. երբ տեսաւ աշակերտները յաջող. և օրհնեց հիմնադիրը, և իւր հարազատ եղբօր Պետրոս Աղային հետ տեսնուելով, մեկնեցաւ անկէց եկաւ 67 վերստ Կոստանդնուպոլիս քաղաքը, անկէց 60 վերստ Աղեքսանդրապոլ. պատուեցաւ յաջորդ գերապատիւ Կոստանդին վարդապետէն և մեծապատիւ Խաչատուրեան Մահտեսի Կոստանդին Աղայէն. գոհութեամբ սրտի ելաւ եկաւ 100 վերստ Սուրբ Էջմիածին, ուր մեծ ընդունելութիւն գտաւ Ամենափառ Արքայական Կաթուղիկոսէն և նորին սրբազան միաբանութենէն, և Սուրբ վերացման Խաչի առաւօտուն Սեպտեմբեր 15 ձեռնադրուեցաւ Եպիսկոպոս, և իրեն հետ ձեռնադրուեցան Մկրտիչ, Թադէոս, Գրիգոր բարեշնորհ Միաբան Վարդապետներն, և վայելեց Վարագայ Սուրբ Խաչին Մեռոնի Սուրբ օրհնութիւնը, և ստիպեց Ամենափառը, որ շուտով ճամբայ ելնէ երթայ Օդէյթին, Մարաշ և Հիլիս և Բերիայ վարժարաններու վրայօք հոգ տանի. Լայն Լայն։

Հետը տարած 3 տղաներու Նիկոլայոս և Պօղոս երկուքը դրաւ ուսումնարանը, և յանձնեց Պօղոս և Եղիա բարեշնորհ վարդապետաց խնամքը, որ գաստատու և տեսուչ էին ուսումնարանին, և Գէորգ տղայն հետը բերաւ եկաւ Աղեքսանդրոպոլ. հոն դրաւ ուսումնարանն ձեռամբ տէր Յովհէթ բարեկարգ քահանայի և գիշերի հանդստութեան համարաւ ընդունեց մեծապատիւ Մահտեսի Գէորգ Աղայ Պապաեանը իրեն տանը մէջ, հոգալով բոլոր պիտոյքը։

Ահաւասիկ՝ մարդասիրական գթութիւն. կեցցէ յաւերժական փառք, որ անձանօթ երկրէ կ'ընդունի մանուկ մը էջրեր ջուրկ հոգալու։

Հոս տեղ հացկերոյթ մը ըրաւ գերապատիւ Մկրտիչ Վարք Եպիսկոպոս Տիգրանեանին. մեծապատիւ Սիրական Աղայն, և պատուով ընդունեց. տեղս շատ չկենալուն համար վարժարաններուն չկրցաւ այցելութիւններ ընել. ասոր համար մենք ալ հոս բան մը անոնց վերայօք չգրեցինք։ Եկաւ ասկէց եկաւ 70 վերստ Էրզրում և հիւր եղաւ բարեկարգ գործակալ. տէր Ստեփաննոս Երժանընտիր Աւագ քահանային։

Հոս տեսնուեցաւ մեծապատիւ Պօղոսեան Գրիգոր Աղային հետ. վարժարանին այցելութիւն ըրաւ և գտաւ յաջողութեան մէջ. որոյ տեսուչն էր նոյն Աւագ բարեջան քահանայն, և տարեկան վարժարանի ծախքը կ'վճարէ մեծապատիւ Յովհաննէս Աղայ Յօնանով, որ կ'բնակի է Մոսկոս։ Ահա Աղգասէր և բարեսէր, որ ազգայնոց մանկտեսոց ապագայ վիճակին հոգալով է։ Սրտաբուխ վասոյին ընդունիր կենի. 8 օր

կեցաւ հոս, եկաւ ասկէց 70 վերսթ. եկաւ Էրեբունի, ուր մեծաւ պատուով ընդունեցին զինքը տեղւոյն բարեշնորհ քահանաները և մեծապատիւ էջմն աղաները, և 15 օր կեցաւ մեծաշէն Ս. Ռաջնորդարանն, և այցելութիւն ըրաւ վարժարաններուն, նախ՝ ազգային Կարապետեան վարժարանին և տեսաւ յառաջադիմութեան մէջ աշակերտները, և խօսեցաւ քարոզ մը, և գոհ ըրաւ բոլոր ունկնդիրները, և գովասանեց հայկաբանութեան դասատու գիտնական Ներսէս պատուելին, և օրհնեց անոր անխարդախ աշխատութիւնը. նոյնպէս Ռուսերէն լեզուի դասատու և միանգամայն տեսուչ և տնօրէն վարժարանին Պօղոսեան մեծապատիւ Ս. Եպիս. Ս. ղային տուաւ օրհնութիւն և գովութիւն. նոյնպէս ձայնաւոր և տաճկերէն, և այլ վարժապետ դասատուացն, որ հոն կաշխատէին սրտի մտօք։

Ինչ այս վարժարանին, թէ Սուրբ Ներկեղեցւոյ, և թէ Ս. Ռաջնորդարանի բոլոր տարեկան ծախքերը կ'վճարուին Կարապետ Ս. Ղազ Եպիսկոպոսի, և նախկին Ս. Ռաջնորդի, հաստատած իւր ընչից կըտակներու եկամտիցը, որոց կարգադրիչ և հոգաբարձուն էր. մեծապատիւ Գրիգոր Ս. ղայ Ռագրատունեանը։ Ահա հովիւ-տաջ որ է-ր հոգին ապագային համար պարբասած էր է-ր յընչեցը տարեկան պէտքնէր... Լայն։

Այն քաջ հովուին հետևած էր մեծապատիւ Մահտեսի Ա. ղրդան Ա. ղարդանեան Ս. ղայն, որ իւր արդար վաստակէն շինէր էր Սրբոց Ա. ղարդանանց յանուն Ներկեղեցին, և անոր կիցը ուսումնարան, և իւր կալուածներէն կ'պատրաստէր մշտնջենական, թէ Ներկեղեցւոյ և թէ ուսումնարանի տարեկանի ծախքերը հոգացուելու չափ կալուածներ։

Ներկաւ մեծապատիւ Մահտեսի Ա. ղրդան Ս. ղայի ուսումնարանը. քննեց աշակերտները, և տեսաւ վարժապետաց եռանդոտ սէրը, և լսեց անոնց դասատուութիւնը և գտաւ միանգամայն կատարեալ և կարգաւորեալ. գոհ եղաւ և օրհնեց զամենը, և խօսեցաւ փոքր խրատ մը, և գոհ ըրաւ զամենքն ալ. ուսումնարանիս վարժապետներն էին Ղ. ղարոս Պաղտասարեան, և Տիգրան Սիսակեան գիտնական պատուելիքը, և Տեսուչն էր մեծապատիւ Հոմոլոգ Ս. ղայն Ա. ղարդանեան։ Ս. յսուսումնարանի բոլոր ծախքերը յիշեալ Ս. ղայն կ'վճարէ իւր արդար վաստակոցն, և ասկէց եկաւ յանուն Սրբոց Ա. ղարդանանց շինեալ Ներկեղեցին. սոյն Ներկեղեցւոյ տեղը յառաջմանէ ուխտատեղիք եղած կ'լինի, բայց աւերակ. ուխտատեղը չըկորսուելու համար, և թաղին 200 տուն ժողովուրդը առանց Ներկեղեցւոյ չմնալու պատճառաւ յիշեալ

Աղայն իւր քսակէն կը շինէ, բարձր փոքրիկ բլրին վերայ խաչաձև չորս գեղեցիկ գմբեթաւոր, որոյ քաղցր տեսութեան տեսարանը, գրեթէ քաղաքի երևելի զարդերէն մէկը եղած է. այս Եկեղեցւոյ համար թանկագին մեծ զանգակ մը յիշատակ յղած էր. վասն. Յովհաննէս Աղայ Յունանովը. որ գովութեան արժանի է։ Այս շինութեան համար շատ մեծամեծ նեղութիւններ և փնտաներ կրեր յիշեալ Մահտեսի Աղայն, և այս գեղեցիկ շինութեան համար Կովկասեան փոխարքայ Մէլիքոյէլ մեծ գուքսը, Ազնուականութեան պատիւը կուտայ Յորդոց Յորդիս Մահտեսի Վարդան Աղային և կ'հաստատէ հրովարտակաւ տրքունի։ Եւ եկաւ աղջկանց վարժարանը և շատ գոհ եղաւ պատուելի Ռաբայէլ Սաղաթէլեանէն որ նորին ջանասիրութեամբ կարգադրուած էր, և մեծապատիւ Յակոբճանեան Մահտեսի Յովհաննէս Աղան ալ յատուկ վարժապետ մը բերած թաղին մէջ մանկունքները վարժուելու համար, և Տէր Մարտիրոս քահանայի աշխատութեամբ, թաղական վարժարան մ'ալ կար, որ ասոնք ամէնը մի և նոյն նպատակի կը ծառայեն. որովհետև ամենուն սրտի փափաքն էր մանկանց կրթութիւնը։ Եւ գերապատիւ Եպիսկոպոսին պատիւ ընելու համար փառաւոր կոչուն մը ըրին Յակոբճանեան Մկրտիչ և Մահտեսի Յովհաննէս Աղայքը. նոյնպէս Մահտեսի Վարդան Վարդանեանը և Գրիգոր Նագրատունեանը և այլ յարգի Աղայք. ի վաղուց հետէ՝ տեղեակ լինելով քիւրտերէն յօրինուած Լաստեր Լուսատու դասագրքին, տեղոյս մեծապատիւ Աղաները, և իմացան որ տակաւին անոր երեք հատորը ձեռագիր կ'մնար, և առաջի հատորէն ալ 500 հատոր առանց կազմի. ուստի միաբանեցան իրենց Անուան յիշատակի համար, և Քիւրտիսթանի հայ մանկանց կրթութեան համար, գրուածք ընել. մեծապատիւ Մութաֆեան Մկրտիչ, և Մահտեսի Վարդան Վարդանեան. Մահտեսի Յովհաննէս Յակոբճանեան և Գրիգոր Նագրատունեան, և այլ երևելի Աղաները։

Որովհետև հաշիւ ըրին մէկ հատորէն, հազար օրինակ տպուելու համար 400 մանէթ ծախք ունէր, երբ սկսան հաւաքում ընել տակաւին 100 մանէթ հաւաքեցաւ. յանկարծ մեծ նպաստ մը կամաւոր հաւաքելու հրաման եկաւ Կառավարութենէն. ուստի՝ այս հաւաքումը մնայ թերակատար և կ'յուսացուի որ՝ կը մնացնեն դարձեալ Աստուծով 400 մանէթը և կ'տպուի գիրքը, անջնջելի յիշատակ։

15 օր նստելէն ետքը այս տեղս, մեծաւ պատուով ելաւ եկաւ Պօրժոմ, Կազմարարեան Գրիգոր Աղային բնակարանը եղաւ

հիւր, և անկէց Սուրամ. տէր Յովսէփ բարեկարգ քահանային, որ սոքա աւելի սէր և մարդասիրական պատիւներ ցոյց տուին յիշեալ Եպիսկոպոսին, և ապա եկաւ Թիֆլիս, հիւր եղաւ բարեկարգ Աւագ Տէր Դաւիթ քահանային։ Այս տեղի վարժարաններուն ըրաւ այցելութիւն. լաւ յաջողութեան մէջ գտաւ աշակերտները. հայկական դասատուն էր պօլսեցի Տէր-Դարամաճեան պատուելին, և ռուսերէնի դասատուն էր Կէր-ոն Մելիք Այկազովը. որոյ եղբայր Աղեքսանդր Մելիք Այկազովը. ընծաներով այցելութիւն կընէր վարժարանին և կ'հսկէր միշտ յառաջադիմութեան աշակերտաց, և վարժարանիս տեսուչն էր գիտնական բարեջան Աւագ Տէր Դաւիթ քահանայն. այսմ վարժարանի ծախուց համար, տարին 400 ռուպլի վսեմ. Յովհաննէս Յօնանեանը կ'վճարէ իւր հարազատ Աղէքսանդրը եղբօր ձեռամբ, որոյ համեստափայլ Տիկինն, Թօզի. այսինքն Վարդուհի հանումը մտադիր եղած է օրիորդաց վարժարան մը բանալու տեղս. վասնորոյ շատ գոհ եղաւ դերապատիւ Եպիսկոպոսը երբ այսպիսի բարի աղգօգուտ լուրերը առաւ. նա մանաւանդ երբ իմացաւ 12 աշակերտ Պետրպուրկի ուսումնարանի մէջ դրած իւր ծախքովը կրթել կուտայ վսեմ. Յօնանովը, և Շուշի քաղաքի տպարանը իւր տառերովը յիշատակ ըրած էր, և շատ տեղուանք ալ ունէր յիշատակներ, որ մենք չ'կրցանք իմանալ։ Ասոր կանգ առաւ ու ըսաւ. էրա՞ Աստուն ըսածը ճշմարիտ է, որ կըսէ, մեծ է մարդ և պատուական, քայց ղայր հա՞ապարէմ գործ է գտանել։

Ահա այսքան բազմութեան մէջ, մէյ մէկ հատ կ'գտնուի որ իրեն ձեռքին տակ գտնուած յընչիցը կ'կարողանայ, աղգօգուտ, և անջընջելի յիշատակներ թողուլ իր անունը անմահացուցանելու. շատերը կան, որ չունին իշխանութիւն իրենց ընչից վերայ իշխելու բարեգործութեան համար ծախս ընելու. ինչպէս որ ըրին յԵրիվան մեծապատիւ վսեմաշուք Ասլան Փաշայն, և Կարապետեան Պօղոս Եֆէնտին. յԱղէքսանդրիոյ Յակոբեան Եղբարքն, Պօղոս Տատեան Յովհաննէս և Պօղոս Պէյերն, Մոսկուա Յովհաննէս Յօնանովն. Աստրախայ Մահտեսի Վարդան Վարդանեան. և այլ վսեմաշուք յարգելիներն, որոց մեք տակաւին բարեգործութեանց նոցին չեմք տեղեակ։ Ահա երանութեան արժանի պատուական անձինք։ Ասելու ենք հիմայ՝ Դէրգինէսին մարէ Լաղարէթ. ահաւասիկ քեզ մարդ՝ զոր կ'խնդրես. ուրեմն կեցցեն Խարերարք Աղգիս, կեցցէ խնամատարն հայազգութեան վսեմաշուք Յովհաննէս Յօնանեան որոյ զաղգօգուտ պտուղն տեսաք աչօք,

որ է փառաւոր պարծանք և պատիւ մեծի տանն Հայկազնեայ, տէր զօրացուսցէ զքեզ փառաւորութեամբ, բոլոր վերոյիշեալ վսեմաշուք Ազնուականքն. ի գաղթականութեան իւրեանց. ուրեմն կեցջիք դուք ամենայն փառաւորութեամբ որ էք ճակատն Հայազգութեան. ընտիր հաւատարիմ Տէրութեան, և Հայազգութեան և նորա եկեղեցւոյն։ Ուրեմն կեցջիք յաւիտենական փառօք փառաւորեալ։ Եր-ևի Դէ-ր-պէ-նանի խոշ-նէ-ան ալ խնամք տանէին յիշեալ բարերարները. ընաւ ու եղաւ Դիւթայիսու եկաւ Փոմի, և անկէց Պօլիս հիւր եղաւ մեծապատիւ Զրաճեան Սարգիս Ազային, տեսնուեցաւ Ամենապատիւ Արբազան Պատրիարքին հետ, և Փոխարքային և այլ երևելեաց, և սկսաւ զէյմինցոց խոստացած բարիքներու մնացորդը կատարելու ճարը գտնալ այսինքն, Դիլիսու, Միւխալլիու, և այլ Օէյմինի շրջակայ վարժարաններու և եկեղեցեաց շինութեան ծախքերը, և քաղաքական տուրքերը և եղած պարտքերը կարգի դնել. ապա երթալ ի Օէյմին, և ի Ներիայ հայլն։ Որովհետև հիմակուան զէյմինցոց վիճակը խաղաղութեան մէջ է. բայց նիւթական աղքատութեան յետին ծայրը հասած են. մինակ 5 վարժարան 2 ուսումնարան կայ, որոց ծախքերը հիմակու հիմայ վսեմ. Պօղոս Կարապետեան, և եղբարք Յակոբեան կրհոգան. բայց էս շատ պակասութեան տեղիք ունին շինութեան եկեղեցեաց վարժարանաց մասին, հայլն. Տիգրանեան գերապատիւ Ամբ Եպիսկոպոսի ջանքն ալ այս է, որ մեծերը անկիրթ մնալով աղքատութեան հասած են. գոնէ իրենց զաւակնին կրթուելով ազատին յաղքատութենէ, հայլն. այնքան հերիք է Օէյմինի վրայօք տեղեկութիւն տալը։

Մշոյ վանքերու վրայօք, հիմակուան կացութեան վիճակը շատ գէշ է, Սուրբ Կարապետու վանքը յաւաջ պարտք չունէր այնքան որքան որ հիմայ ունի. Սուրբ Յովհաննէսու վանքը կողոպտուած, Սրբոց Առաքելոց վանքը անբարեկարգ. վերջապէս ոչ օրինաւոր ուսումնարան և ոչ ալ կարգադրութիւն, եկող ուխտաւորացմէ տեղեկանալով գրեցի հոս, ով որ կասկած ունի, կրնայ երթալ աչքք տեսնալ, ես կասկած չունենալուս համար գրեցի։

Դիւրտիսթանու վիճակը. այժմեայ Իսմայիլ Փաշայի շնորհիւ լաւ է. բայց Տիգրանեան գերապատիւ Ամբ Եպիսկոպոսի և նախկին Դիւրտիսթանի Առաջնորդի հաստատած վարժարաններու մէկ քանին խանգարուած է, և մէկ քանին հաստատ է, և շատ գրեանքներ և ծախքեր եղան, և շատ բարեկարգութեանց ներքև պիտի մնար Դիւր-

տիսթանի հայոց թէ եկեղեցիներն և թէ վարժարանները. թէոր Տիգրանեանը հոն շարունակ մնար. քանզի անոր համբաւէն քիւրտ պէյերը անգամ կ'պատուէին զինքը. անոր օրովը ոչ մի դէշութիւն եղաւ հայոց վանօրէից որ ընդ իշխանութեամբ նորա էր. բայց հիմայ շատ բաներ եղան ու կըլլան։

Որովհետև Քիւրտիսթանի համար շատ աշխատեցաւ Տիգրանեան Մկրտիչ Ամբ Եպիսկոպոս Արբազանը, իր վարդապետութեան ժամանակին, ինչպէս որ Հայելի գործոց գրքին մէջ սկսեալ սկիզբէն մինչև ցվերջը կերևի. բայց մեք հոս տեղ համառօտ ցոյց կուտամք. ուզողը յիշեալ գրքին մէջ կրնայ ընդարձակ պատմութիւնը գտնայ և կարդայ։ Երբ զմիւռնիոյ Առաջնորդ Եդեսացի Յարութիւն Ամբ Եպիսկոպոսը Առաջնորդ եղաւ Կարնոյ և Մշոյ Սուրբ Կարապետու վանից և եկաւ Մուշ. կամեցաւ Քիւրտիսթան հայերէն լեզուն, և հայերէն գրել և կարդալը մտցնել. ուստի Սուրբ Յովհաննէս վանից Քիւրտիսթան վիճակի վերան ձեռնադրեց զՏիգրանեան Մկրտիչ վարդապետը 1838 Դեկտեմբեր 10ին, և իւր կոնտակաւ Առաջնորդ կարգեց յիշեալ վիճակներուն և յղեց ի Քիւրտիսթան 1839 Փետրուար 1. եկաւ Քիւրտիսթան շրջեցաւ բոլոր վիճակները և նշանակեց վարժարաններու տեղուանքները, և գրեց կարգ և կանոնները, և դարձաւ ի վանս առ վանահայրն, և վասն ծանր պարտուցն վանից ազատուելու համար, նուիրակ ղրկեցին զնա Բաբիլոն, Դաւրէժ, և բոլոր Վիլիկիոյ, և Պոլսոյ վիճակները։ Շրջեցաւ բոլոր վիճակները եկաւ Պոլիս 1844 Յունիս 10 առաւ վարժարանի վերաբերեալ գրքեր, և Մատթէոս Պատրիարքէն վարժարաններ հաստատելու կոնտակ, և եկաւ Քիւրտիսթան. հաստատեց վարժարաններ և եկաւ վանքը տուաւ նուիրակութեան հաշիւները և դարձաւ ի Քիւրտիսթան. տես Հայելի Գործոց գրքէ 8 Ղղեհամարէն մինչև 28 Ղղեհամարն։

Վարժարաններու յառաջադիմութեան արգելք տուողները օր ըստ օրէ շատնալու առջևը առնելու համար եկաւ ի Պոլիս 1845. Մատթէոս Պատրիարքը, դարձեալ յղեց զինքը ի Քիւրտիսթան. որպէս թէ ի կարգի դրաւ գործերը. եկաւ ի Կարին և անկէց գնաց Մուշ, ուր բռնեցին բանտարկելին զնա 80 օր, նոյն բանտին մէջ Աւետարանը հայերենէն ի Քիւրտ լեզու թարգմանեց քիւրտիսթանցւոց համար, որ և տպուեցաւ վերջը։ Երբոր կերպով մի ազատեցաւ բանտէն, եկաւ Տիգրանակերտ, և ազատեց սասունցի հայերը պատերազմական մեծ վտանգներէն, և իր կրած ծանր նեղութիւններու

և վեանները մասին բողոքելու համար եկաւ Պոլիս 1847ին։ Այս երրորդ գ�է ի Պոլիս։ տեսս Հայելի Գործոց 28ն մինչև 36 ընդհանրն։ Այս միջոցին դատը տեսան, և Պատրիարքական փոխանորդ կարգեցին Տիգրանակերտու, և Արիւրտիսթանու, և եկաւ ի Տիգրանակերտ 1848 Յունիս 1։ և սկսաւ հոգ տանել վարժարաններուն և ժողովրդոց։ կրեց սաստիկ գոլէրայ աղտի հարուածները։ և իբրև դադարեցաւ հրաման եկաւ Պոլսոյ երթալ Նիկոպոլիս։ այսինքն Հէրեն Գորհիոսը։ քննել Պետրոս Եպիսկոպոսի, Գրիգոր վարդապետի։ Գրիգոր փոքրաւորի, յանկարծ սպանման պատճառը և սպանողները գտնալու հնարները ձեռք բերել։ ուստի եկաւ և գնաց 1849 Հոկտեմբեր 20։ Տեսս Հայելի Գործոց 67ն մինչև 97 ընդհանրն։

Աննութիւնը լմնցուց, գողերը գտաւ։ այրած եկեղեցւոյ հիմը օծեց և դրաւ։ խաղաղացաւ քաղաքը ամէն վտանգներէն, և ազատեցաւ։ յետ այնորիկ ուզուեցաւ ի Պոլիս և եկաւ 1852ին։ Այս ընդարձակ է ի Պոլիս։ տեսս Հայելի Գործոց 47ն 50 երեսն։

Հրամայեցին գնալ Եօզկատ քաղաքն։ գնաց հաստատեց աղջկանց վարժարանը, քաղաքական և կրօնական ժողովները, և վերադարձաւ ի Պոլիս։ Այս հինգերորդ գալն է ի Պոլիս։ տեսս Հայելի գործոց 50ն 56 երեսն։

Այս անգամ միանգամայն Արիւրտիսթանու Առաջնորդ հաստատեցին Արքունի հրովարտակաւ և եկաւ, հաստատեց դարձեալ վարժարանները Սէղերտ, Բէնդվէն, Օ՚ոտ, Հէնէ, Լէճ, Հէղրց, Սոռոֆեղ գիւղաքաղաքներն և բաշխեց գրեանքներ, հաստատեց կարգ և կանոններ։ շինեց Թրճիլու վանից սենեակներն։ հաստատեց այգիներ և պարտէզներ։ տեսս Արշալոյս 4 թիւն 1858։ Ուզուեցաւ ի Պոլիս և եկաւ։ Այս վեցերորդ գալն է։ տեսս Հայելի Գործոց 57ն 63երեսն։

Գէորգ Արքեպիսկոպոսը ղրկեց զինքը Աղթամարի Սուրբ Յակոբ եկեղեցին առ ժամանակեայ քարոզիչ։ Նոյն եկեղեցին եղաւ ուխտատեղի։ հազարաւոր անձինք գալով նորին քարոզութեամբը՝ հոս տեղ յօրինեց քիւրտերէն քերականը, և Լապտեր Լուսատու գիրքը։ քերականէն վեց հազար հատ տպել տուաւ, և շատ գրքեր ալ առաւ, դարձեալ եկաւ Արիւրտիսթան, և Նալու։ Նորոգեց վարժարանները և ցրուեց գրեանքը և շատ աշխատեցաւ։ վերջապէս շատ նեղութիւններ կրելէն ետքը, վեաներ ալ տեսաւ։ ահա տեսս Հայելի Գործոց։ 83 երեսէն 110 երեսը, որոց որ բարիք մը ըրած էր, անոնցմէ կրեց վիշտ և տառապանք, նեղութիւնք և նիւթական վնաս-

ներ, և մինչև հիմայ ալ քանի որ բարիք ընելու ըլլայ պիտի ՁԵԱՍ-ուի. բարեսանքներով, զբաղարտութիւններով, տեսակ տեսակ չա-բահնար թշնամական ոգւով, իրմէ բարիք տեսնողներէն։

Վանորոյ երբ 1863ին եկաւ Պօլիս. Արիւրտիսթանի համար Լապտեր Լուսատուի առաջի հատորէն 1000 օրինակ տպել տուաւ, և ան ատեն անոր վերջը գրեց այս ոտանաւորը։

Ուր Լեյե Բարոյն համար, ընդ կոմս աշխարհս,
Յաւէտ պարարտ եղէր տեսակ տեսակ ՁԵԱՍՈՒԵԼՈՎ։

Որոյ տպագրութեան ծախուց համար ալ շնորհ ըրին 2500 դահեկան Գարիամաճեան Լուսիկ և Մանուկ վսեմաշուք աղաները. 1000 դահեկան Հարենց մահտեսի Աբրահամ աղայն, Զրաճեան Սարգիս աղայն և Յարութիւն աղայն, և այլ բազում յարգի աղաներ։

Գրքերը ղրկեց Արիւրտիսթան. այն միջոցին Կիլիկիոյ վիճակը առանց Առաջնորդի մնալու համար՝, զինքը յղեցին Հալէպ Առաջնորդ, որ հոն բարեկարգէ. 1866 Յունիս 1, որ Նոյեմբեր 12ին պատա-հեցաւ Օէյթինի գործերը, ինչպէս որ տեսար տեսարակիս սկիզբը։ Եւ հիմա ալ պէտք եղածը հետևեալքն են կատարուելու որ եօթը խոստմունքներէն թերակատար մնացած խոստմունքներն են։ Նախ՝ Օէյթինի մէջ հաստատուած չորս վարժարանի և մէկ ուսումնարանի տարեկան ծախքը ապահովցնելու ճարը գտնալ։ Երէկուէ՝ Օէյթինի շրջակայ հայաբնակ տեղուանքներուն մէջ, հասարակ գրել կարդալու համար, ՁԷԺՇԿՈՒԹԻՒՆՆԵՐ և մանկավարժներ հաստատել։ Երրորդ՝ կիսաշէն և քայքայեալ եկեղեցիները շինել և նորոգել, և յետ այնորիկ ժամա-տուն և քահանայ չեղած փոքր տեղուանքնուն համար ալ ՀԱՄԱՊՕՏՈՒՆ մը և քահանայ մը հաստատել. ասոնք հոգացուելով գործադրելու ըլլաքնէ. ուստի տեղիք մը չմնար դրացի եկեղեցականներուն ոտք դնել յիշեալ հայաբնակ գաւառներուն մէջ և քարոզելու կամ յոր-դորելով համոզելու Լուսաւորչական հայ ժողովուրդնիս իրենց յեկե-ղեցին մտցնելու համար։

Ուրեմն Հայ արիւն ունեցող Հայը անտարբեր պէտք չէ մնալ այս մասին օգնելու թէ բանիւ և թէ արդեամբ։ Այն անձը՝ որ աղքատ է, և կարէ իշխել իրեն անձին, և ստացուածքին, նա կարող է այս ասպարէզին մէջ յաղնող գտնուիլ, բանիւ և արդիւնաւոր նիւթական գործքերով, Նորահաս բազմաթիւ հայ մանկտեաց ապագայ վիճակնին լաւցնելու և հայազգութեան բարձր անունը փառաւոր շքեղացընելու հեռաւոր և մերձաւոր շատ մը քրիստոնեայ աղգերու առջև. ինչպէս

որ շատերը իշխելով իրենց ստացուածքին վերայ, անով անմահացուցին իրենց անունը շքեղ փառաւորութեամբ, և արժանի ըրին յազգէ յազգ յիշատակուելու բոլոր ժամանակի և մանաւանդ հանդիսաւոր օրերու տօնախմբութեան հանդէսներու մէջ. զորօրինակ ի Պոլիս,

Խումխաբուն Պէզճեան Յարութիւն Էմիրան, և Պէրբ Պէյ Տատեան, և Խաչիկ Կարապետ Էմիրան, Դատի գիւղ Մուրատեան մահտեսի Կարապետ Աղայն, Յեգիպտոս և Յալեքսանդրիայ, Պէրբ և Պետրոս Պէյ, Յալիսիայ Կարապետ Ալբ Եպիսկոպոս, և այլ ասոնց նման շատեր ևս կան որ ննջեցին ի Քրիստոս Յիսուս. մեզի անծանօթ են։ Եւ շատերն ալ կան որոնք ողջ են ու կ'շարունակեն իրենց աշխատութիւնը և իրենց ստացուածները զոհ ընելով, թէ եկեղեցի, և թէ վարժարան շինելով, և անոնց ծախսերը հոգալով, և թէ գրեանքներ տպել տալով ի լոյս հանելով. եւ եւ. զորօրինակ, ի Պոլիս վեմ. Յովհաննէս Պէյ Տատեան, Խաչիկ և Մանուկ, Գէորգ և Յարութիւն Աղայք Դաբամաճեան, Մանուկ Էսլանեան, Պօղոս և Մկրտիչ Էֆէնտիք Մուրատեան, Յեգիպտոս վեմ. Նուպար Փաշայ, Պօղոս Կարապետեան, Թագուոր Յակոբեան Աղայք, Մոսկուա վեմ. Յովհաննէս Յոնանեան, Խաչատուր Լազարեան. Յալիսիայ մահտեսի Վարդան Վարդանեան, Տիգրանակերտ Յովհաննէս Աղայ Մինասեան, Պետրոս Աղայ Խանտանեան, Պետրոս Աղայ Ղազարեան. Յակոբ Աղայ Փափազեան, և այլ ասոնց նման շատեր կան, բայց մեզ անծանօթ ըլլալով կ'լռեմք։ Ահա՝ ով ոք կուզէ անունը անմահացընել, թող աշխատի բանիւ գործով և նիւթական արդեամբ յառաջ գալ ի փառս Աստուծոյ, ի պատիւ և ի սէր հայազգութեան, և անմահութեան անուան իւրոյ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Մանրամասնաբար տեղեկութիւնները Օէյմինի և թէ Սուրբ Էջմիածնի, թէ Էսլցիսոյ, թէ Կարնոյ, թէ Եդեսիոյ, Սեբերկու, Ամթայ, Պերեճիկու, և թէ Պոլսոյ, Էյիպու, Խասգիւղի, Դատի գիւղ[illegible] կեղեցեաց և վարժարանաց շինութեան և շարունակութեան [illegible] մանաւանդ քանի մը ազգասէր բարերար յարգելեաց աշխատ[illegible]ճանց և արդասեացը վրայօք պիտի խօսիմք առանձին տետրակի [illegible], Լապտեր Լուսատու գրքի երկրորդ հատորին վերջը. եթէ յաջողի յիշեալ գրքի տպագրուիլը մօտ օրերս։

Զէյթունի գործքերը լսէ,
Ապագային վերայ խորհէ.
Քիւրտիսթանի խեղճ հայերու,
Անմեղ մանկանց հասի՛ր օգնէ։

Օր պէտք կայ, դառնաս է հողը,
Դուրձէրդ է էջ յիշատակողը.
Սրտան է էջ արքունն ճնալը,
Մահը կուգայ ելքը գլխողը։

Մեր կեանքը կանցընի,
Ստացուածքնիս կը փրճանայ,
Ինչ որ տուինք մեր ձեռքով,
Այն մեր առջեւ կընթանայ։

Նէ վերերին եկողն էլէ,
Օ կելնէ՛ էն էլէ։
Նէ սեղլերին դնողն էլէ,
Օ ղբգոնգ սերինէ։

Կարող
նիւ
ուճակնր
ցինե

[1a 804 нед.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0031318